ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՈՒՍԱՁԱՅՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/49

ք. Երևան «29» 04 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս Վ. Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ալիկանտե»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Պրոնիշչևի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է լուսաձայնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[20]

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[20] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011001352 ՀՎՀՀ 00153247 Գլխավոր քարտուղար՝	«Ալիկանտե» ՍՊԸ Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155շ «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570012604290100 ՀՎՀՀ 01014536 Տնօրեն՝
---------- Վ:Օհանյան (ստորագրություն) L.S.	---------- Ա.Պրոնիշչեվ (ստորագրություն) L.S.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«29» 04 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/49 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	50111130-7	Լուսաձայնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	դրամ	3 000 000	1	ՀՀ քաղաք Երևան Դավթաշեն 4,Ա.Միկոյան 109/8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 25.12.2021թ

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

---------- Վ.Օհանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ալիկանտե» ՍՊԸ

Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155շ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012604290100
ՀՎՀՀ 01014536
Տնօրեն՝

Ա.Պրոնիշչեվ
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
«29» 04 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/49 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Ծառայությունները մատուցվում են ստորև ներկայացվող ցանկով նշված վայրերում

*** Կատարողը պարտավոր է ունենալ ախտորոշման համար նախատեսված համապատասխան գույք-սարքավորումներ, որոնք թույլ կտան բացահայտել տվյալ սարքի, դրա առանձին հանգույցների անսարքության պատճառները:**
Նորոգման աշխատանքները կամ բոլոր տեսակի անսարքությունների վերացումը՝ կատարվում է շաբաթվա բոլոր օրերին, 24 ժամվա ընթացքում:
Ծառայությունները մատուցվում են պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հայտերի հիման վրա, ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Փրկարար ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանումներում՝ Կատարողի միջոցներով:

Փրկարար ծառայության հատուկ տեխնիկաների վրա տեղադրված էլեկտրասարքավորումների վերանորոգման ծառայությունների և օգտագործվող պահեստամասերի անվանումները

N	Լուսաձայնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ, այդ թվում	Գինը
1	Լուսաձայնային սարքավորման դիագնոստիկա	4800
2	Լուսաձայնային սարքավորման պրոֆիլակտիկա	6000
3	Լուսաձայնային սարքավորման մասնակի մասնատում/հավաքում	8000
4	Լուսաձայնային սարքավորման ամբողջական մասնատում և հավաքում	19000
5	Լուսաձայնային սարքավորման ապամոնտաժում	6000
6	Լուսաձայնային սարքավորման տեղադրում	10000
7	Քսենոնային լուսատուի վերանորոգում	1500
8	Հալոգենային լուսատուի վերանորոգում	1500
9	Բարձրախոսի վերանորոգում	11000
10	Քսենոնային լուսատուի ղեկավարման սարքի վերանորոգում	12000
11	Հալոգենային լուսատուի ղեկավարման վահանակի վերանորոգում	12000
12	Լուսաձայնային սարքավորման լարանցումների անսարքության վերականգնում	2000
13	Լուսաձայնային սարքավորման լարանցումների փոխարինում նորով	8000
14	CJB- կենտրոնական կանտրոլերի վերանորոգում	36000
15	CJB- կենտրոնական կանտրոլերի դիագնոստիկա	4500
16	CJB- կենտրոնական կանտրոլերի պրոֆիլակտիկա	6000
17	CJB- կենտրոնական կանտրոլերի ղեկավարման վահանակի խոսափողի վերանորոգում	8000
18	Լամպի փոխարինում	1000
19	Ռադիոկայանի դիագնոստիկա	7000
20	Ռադիոկայանի վերանորոգում	16000
21	Ռադիոկայանի ալեհավաքի վերանորոգում	3000
22	Ռադիոկայանի ալեհավաքի փոխարինում	22000
23	Ռադիոկայանի ապամոնտաժում	4000
24	Ռադիոկայանի տեղադրում	4000
25	Ռադիոկայանի պրոֆիլակտիկա	5000
26	Լուսաձայնային սարքավորման դիմային լուսադիոդային համակարգի մեկ շարասյան փոխարինում	24000

27	Լուսաձայնային սարքավորման կողային լուսադիոդային համակարգի մեկ շարասյան փոխարինում	9000
28	Լուսադիոդային համակարգի ղեկավարման սարքի փոխարինում	22000
29	Լուսաձայնային սարքավորման կիսակարբոնատե ապակու փոխարինում	21000
30	Բարձրախոսի պաշտպանիչ նիկելապատ թիթեղի փոխարինում	16000
31	Xenon Flash bulbs, քսենոնային լուսատուի փոխարինում	4000
32	Hal, Flash bulbs հալոգեն լուսատուի փոխարինում	5000
33	Membrance, բարձրախոսի մեմբրանի փոխարինում	8500
34	P/supply controller, քսենոնային լուսատուների ղեկավարման սարքի փոխարինում	14000
35	HA 100, բարձրախոսի փոխարինում	78000
36	HA 150, բարձրախոսի փոխարինում	93000
37	HA 200, բարձրախոսի փոխարինում	160000
38	Spare parts, պահեստամասերի փոխարինում	8000
39	CJB-կենտրոնական կոնտրոլլեր, ղեկավարման սարքի փոխարինում HA 150 12W, 24W	73000
40	CJB-կենտրոնական կոնտրոլլեր, ղեկավարման սարքի փոխարինում HA 200 12W, 24W	115000
41	CJB- կենտրոնական կանտրոլերի ղեկավարման վահանակի խոսափողի փոխարինում	26000
42	Ալյումինե տակդիր	36000
	Ընդամենը՝	930800
Կատարողի ներկայացրած գնային առաջարկը (հանրագումարային գին) կազմում է 618 000 ՀՀ դրամ		

ՑԱՆԿ

ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության գործող ստորաբաժանումների

	Ստորաբաժանման անվանումը	Հասցեն
1	ՀՆՓԱԻԿ	գ. Բալահովիտ 2-րդ փող. թիվ 87 շենք-շին.
2	ՓԾ ԹՆԱՎ ՏՍՎ բազա	ք. Երևան, Հալաբյան 48, Ա. Միկոյան 2/21 և 2/22
3	N 1 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Իսակովի 9/1
4	N 2 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Սևանի 124
5	N 3 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Գլինկայի 13
6	N 4 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Շարուրի 22/1
7	N 5 հրշեջ փրկարարական ջոկատ	ք.Երևան,Ղափանցյան7/3
8	N 6 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Արցախի 4 նրբ.5/7
9	N 7 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Հասրացյան9/1
10	N 8 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան , Մյասնիկյան 1
11	N 9 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Գյուլիթեխյան 12/2
12	N 10 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Նուբարաշեն 11փ. վերջ
13	N 11 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Աճառյան 44/5
14	Հատուկ հրշեջ ջոկատ	ք. Երևան, Ա. Միկոյան 109/12
15	**Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն**	ք. Աշտարակ Մուղնի թղմ.
16	Աշտարակի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Աշտարակ, Ղազար Փարպեցու 2
17	Ապարանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ապարան, Գայի 17
18	Թալինի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Թալին, Երևանյան խճղ. 10
19	Արագածի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Ծաղկահովիտ 1 փ. 2 շ.
20	**Արարատի մարզային փրկարարական վարչություն**	ք. Արտաշատ Օգոստոսի 23 նախկին մանկական պոլիկլինիկա
21	Արարատի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Սուրենավան, Երևանյան խճղ. 2
22	Արտաշատի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ. 48 շ.

23	Մասիսի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Մասիս, Բաղրամյան 26
24	Վեդու հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վեդի, Արցախի 6
25	**Արմավիրի մարզային փրկարարական վարչություն, հրշեջ փրկարարական ջոկատ**	ք.Արմավիր, Աբովյան փ. 151
26	Բաղրամյանի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Մյասնիկյան, Իսակովի շ. 19
27	Վաղարշապատի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վաղարշապատ, Աթարբեկյան 11
28	**Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն**	ք. Գավառ, Նալբանդյան 116, 116/1, 116/2
29	Սևանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Սևան, Նաիրյան 142
30	Մարտունու հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Մարտունի, Սայաթ-Նովայի 40
31	Վարդենիսի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վարդենիս, Չարենցի 64
32	Ճամբարակի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ճամբարակ, Տիգրան Մեծի 1
33	Գավառի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Գավառ, Ազատամարտիկի 5
34	Գավառի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Գավառ, Ազատության 3
35	Սևանի ՋՐՓՐԿ	ք. Սևան, թերակղզի Հիդրոմետկայան
36	**Լոռու մարզային փրկարարական վարչություն**	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 3/1
37	Վանաձորի N1 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վանաձոր, Երևանյան խճղ. 62
38	Վանաձորի N2 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վանաձոր, Վարդանանց 6գ
39	Սպիտակի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Սպիտակ, Մուրացանի 2
40	Թումանյանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ալավերդի, Թումանյան փող. 1
41	Օձունու հրշեջ փրկարարական հենակետ	ք. Օձունի 6 փող. 4 շենք
42	Ստեփանավանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ստեփանավան, Սուրբ Նշանի 8
43	Տաշիրի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Տաշիր, Գորկու 18
44	Գուգարքի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Գուգարք
45	**Կոտայքի մարզային փրկարարական վարչություն**	ք. Աբովյան, Հատիսի 4
46	Հրազդանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Հրազդան, Ա. Միքայելյան13
47	Աբովյանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Աբովյան, Հատիսի 4
48	Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Չարենցավան, Հոկտեմբերյան 2
49	Պահեստներ, նախկին ախտորոշման կենտրոն	ք. Հրազդան, Երևան-Սևան մայրուղու հարող տարածք
50	Եղվարդի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Եղվարդ, Սաֆարյան 1-ին նրբ.
51	**Շիրակի մարզային փրկարարական վարչություն**	ք. ԳյումրիՂուկասյան30/6
52	Շիրակի մարզային ՃԿԿ	ք. Գյումրի Կ.Դեմիճյան 23
53	Գյումրու N1 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 38/2
54	Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Արթիկ, Շահումյան 5
55	Ամասիայի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Ամասիա, 2փող.թիվ 4
56	Անիի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Անի, Շահինյան 3
57	Աշոցքի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Աշոցք, Գյումրու մայրուղի
58	Ախուրյանի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Ախուրյան, Ախուրյանի խճղ. 10/4
59	**Սյունիքի մարզային փրկարարական վարչություն, Կապանի հրշեջ փրկարարական ջոկատ**	ք. Կապան, Ա. Մանուկյան փող. 1նրբ.
60	Սիսիանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Սիսիան. Իսրայելյան 6
61	Գորիսի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Գորիս, Բակունցի 2
62	Մեղրու հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Մեղրի, Բաղրամյան 1
63	Ագարակի հրշեջ փրկարարական հենակետ	գ. Ագարակ Սայաթ-Նովա 26
64	Քաջարանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Քաջարան, Լեռնագործների 22
65	**Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչություն**	ք. Եղեգնաձոր, Վ.Գևորգյան 1/2

66	Եղեգնաձորի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Եղեգնաձոր, Շահումյան 22
67	Ջերմուկի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ջերմուկ, Ձախափնյակի 1բ
68	Վայքի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վայք, Մյասնիկյան 15
69	**Տավուշի մարզային փրկարարական վարչություն**	ք. Իջևան, Արցախյան 4
70	Իջևանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Իջևան, Վասիլյան 4
71	Դիլիջանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Դիլիջան, Շամախյան 4
72	Նոյեմբերյանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Նոյեմբերյան, Կամոյի 1
73	Տավուշի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Բերդ, Թումանյան 1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

---------- Վ:Օհանյան
(ստորագրություն)

L.S.

ԿԱՏԱՐՈՂ

«Ալիկանտե» ՍՊԸ

Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155շ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012604290100
ՀՎՀՀ 01014536
Տնօրեն՝

---------- Ա.Պրոնիշչեվ
(ստորագրություն)

Մ.Տ.

Հավելված N 2
«29» 04 2021թ. կնքված
ԳՀՇՁԲ-ԱԻՆ-21/49 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130-7	*Լուսածայնային սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ*				1 350 000	1 350 000	1 350 000	2 250 000	2 250 000	2 250 000	3 000 000	3 000 000	3 000 000	3 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան, փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

---------- Վ.Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ալիկանտե» ՍՊԸ

Ք.Երևան, Կոմիտասի պ.54/155շ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570012604290100
ՀՎՀՀ 01014536
Տնօրեն՝

---------- Ա.Պրոնիշչեվ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«29» 04 20[illegible]թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/49 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«29» 04 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/49 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն